**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N «ՄԱՏ-ՄԱԾՁԲ-04/26-Հ1»**
**«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ՝ 07.01.2026Թ. ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՄԱՏ-ՄԱԾՁԲ-04/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «24» «փետրվար» 2026թ.

«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամը, ի դեմս տնօրեն Ա. Խզմալյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, ԼԻԼԻԹ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ ՄԻՀՐԱՆԻ ԱՁ-ն (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2026 թվականի հունվարի 7-ին կնքված N ՄԱՏ-ՄԱԾՁԲ-04/26 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ հիմնադրամի կարիքների համար մասնագիտական միջնակարգ կրթության ծառայությունների /մանրանկարչության դասընթացներ/ ձեռքբերման գնման գործընթացի իրականացման պատասխանատու ստորաբաժանման կողմից ստացված գրությունը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին պայմանագրի 2.2 կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 Ծրագրի շրջանակներում Կատարողին ապահովել անհրաժեշտ նյութերով:»

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի
անվան հին ձեռագրերի գիտահետազոտական
ինստիտուտ» Հիմնադրամ
ք. Երևան, Մաշտոցի պող. 53
ՀՎՀՀ 01503576
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ, Հ/Հ 1570082775337700

**Ա. Խզմալյան** ----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

ԼԻԼԻԹ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ ՄԻՀՐԱՆԻ ԱՁ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք, Բաղյան 1 նրբ.,
շենք 3, բն. 3
ՀՎՀՀ 26575356
Բանկ՝ «Ակբա Բանկ»ԲԲԸ
Հ/Հ 220469673671000

**Լ. Վարդումյան** ----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.